

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱԿԱДЕՄԻՅԱ ՆԱՈԿ ԱՐՄՅԱՆՍԿՈՎ ՀՀԳ

Էթոպեր. և կլինիկ.
բժշկ. հանդիս

III, № 5, 1963

Журн. экспер. и
клинич. медицины

ԲԺԻՇԿ Գ. ԱԽՎԵՐԴՅԱՆԸ—ՍԱՅԱԹՆՈՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԱԿԱՆԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ


Հայ ժողովրդի հանճարեղ երգիչ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի տոնակատարության այս օրերին, բնականաբար, երախտագիտության շերմ խոսքեր են ասվում հայ և օտարազգի գրողների, գրականագետների, մշակույթի մյուս բնագավառների այն մեծ ու «շարքային» մարդկանց հասցեին, որոնք իրենց ավանդն են մուծել սայաթնովագիտության մեջ։ Բառացիորեն հանցանք կլիներ այդ նույն առիթով երախտագիտությամբ շհարգել, Հովհաննես Թումանյանի արտահայտությամբ, «անմահ երգչին ու նրա երգերը ամենակուլ ժամանակի բերանից իւլող Գևորգ Ախվերդյանի հիշատակը»։

Սայաթ-Նովան մեր օրերին շէր հասնի այնպիսի անաղարտությամբ և վեհությամբ, եթե իր հայրենանվեր գործը շաներ բժշկապետ Գևորգ Ախվերդյանը՝ եթե չգտներ Սայաթ-Նովայի ձեռքով գրված երգերի «Դավթարը», եթե չվերծաներ, չմեկնաբաներ, առաջին անգամ չհրատարակեր հայ ժողովրդի այդ երգոց-երգը։

Բժիշկ Գևորգ Ախվերդյանը բնիկ թիֆլիսեցի էր։ Ծնվել է 1818 թվականին։ Սկզբնական կրթությունը ստանալուց հետո, նա 1830 թվականին մեկնել է Մոսկվա և ընդունվել Լազարյան ճեմարանը։ 1834 թվականին ճեմարանն ավարտելուց հետո, ընդունվում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը։ Ախվերդյանի առաջադիմության մասին է վկայում այն փաստը, որ նա երկրորդ կուրսում արժանանում է վերջին կուրսի ուսանողների համար սահմանված մրցանակի՝ ոսկե մեդալի։

Բժշկական բարձրագույն կրթությունն ստանալուց հետո Ախվերդյանը, 1839 թվականին վերադառնում է Կովկաս և զինվորական բժշկի պաշտոնով աշխատանքի անցնում Թիֆլիսում։ Այստեղ, բացի իր պաշտոնական ծառայություններից, նա բժշկական լայն գործունեություն է ծավալում բնակչության, հասարակ «խալխի» շրջանում։ Կարճ ժամանակամիջոցում Ախվերդյանի անունը հայտնի և սիրելի է դառնում բնակչության շայն խավերում։

Գ. Ախվերդյանի եղակի ձիրքը, նրա մասնագիտական ընդունակությունները աննկատ շեն մնում նաև «բարձր շրջաններում»։ Այդ տարիներին Կովկաս է դալիս Ռուսաստանի ռազմական մինիստր Զերնիշեր։ Նա Ախվերդյանին, որպես իր անձնական բժիշկ, տանում է Պետերբուրգ։ 4—5 տարի մնալով այստեղ, Ախվերդյանը իր տաղանդի շնորհիվ, մեծ հեղինակության ու պատվի է արժանանում։ Հինելով վերին աստիճանի մարդասեր, ունենալով



ծայրահեղ հոգատար բնավորություն, Ախվերդյանը շատ մարդկանց է օգնում իր հեղինակությամբ, հասնում այն բանին, որ բեկանվեն հասարակ մարդկանց նկատմամբ կաշառակեր իշխանավորների կողմից ընդունված անարդար դատերը։ Սակայն ուզմական մինիստրից իր անձի համար Ախվերդյանի միակ խնդիրքն էր՝ ընդունել հրաժարականը, թույլ տալ վերադառնալ Կովկաս՝ իր սիրելի ծննդավայրը, իրեն հարազատ մարդկանց շրջանը։

Ի վերջո, 1844 թվականին Ախվերդյանին հաջողվում է վերադառնալ Թիֆլիս։ «Մեզ համար ցավ եղավ այդպիսի մի պատվական անձնավորությունից զրկվելը»—Կովկասի փոխարքա Վորոնցովի կնոջը հասցեագրված նամակում գրում է մինիստր Զերնիշեի կինը։ Ախվերդյանի կյանքում սկսվեց մի նոր, հայրենանվեր գործերով առկեցուն ժամանակաշրջան։

Ճիշտ է, իր մեծ հեղինակության և բազմակողմանի զիտելիքների շնորհիվ, նա, կամա թե ակամա, մասնակից էր դառնում կառավարական շրջանակում շատ հարցերի քննարկմանը, սակայն նրա տարերքն այժմ իր հարազատ ժողովրդի հոգեւոր աշխարհն էր, նրա զիրն ու գրականությունը, նրա բազմադարյան կուտուրան։ Նրա սիրտն ու հոգին սերտորեն կապվում են իր ժողովրդի առօրյային, նրա հոգսին, վշտին, ապրումներին։ Դեպքերը հաճախ են ստիպում Ախվերդյանին՝ թողնել բժշկական գործը և իր ծանրակշիռ խոսքն ասել ժողովրդի բախտի հետ կապված՝ «վերևներում» քննարկվող հարցերի վերաբերյալ։

Չնայած ծայրահեղ բյուրոկրատիզմին և աշխատավոր մարդու նկատմամբ կառավարող շրջանների քար անտարբերությանը, Ախվերդյանին, այնուամենայնիվ, հաջողվում է ու քիչ դեպքերում շահել աշխատավորի դատը։ Ահա դրանցից մեկը. 1857 թվականին որոշում էր պատրաստվում՝ քաղաքական տեսակետից անբարեհության նկատառումով արգելելու Թիֆլիսի համբարների ընկերությունը։ Համբարները դիմում են Ախվերդյանի օգնությանը։ Նա ակտիվ մասնակցություն է ունենում այդ հարցում։ Կովկասի փոխարքա Բարատինսկուն է ներկայացնում իր կողմից մանրազնին կազմած ուսումնասիրությունը և հասնում այն բանին, որ համբարությունը պահպանվում է։ 1882 թվականին «Юридическое обозрение» թերթում տպագրվում է այդ ուսումնասիրության մի մասը, իսկ մի տարի անց Թիֆլիսում այն հրատարակվում է առանձին գրքով՝ «Թիֆլիսյան համբարները, Ախվերդյանի հիշողություններից» վերնագրով։

Բնակչության շրջանում Գ. Ախվերդյանի ունեցած մեծ հեղինակության մասին է վկայում նաև այն փաստը, որ ամենայն հայոց կաթողիկոս Մաթևոսի Ա-ի ընտրության համար Թիֆլիսի հայությունը միաձայն պատգամավոր է ընտրում իր սիրելի բժշկին։ Այդ դեպքին ականատես Պերճ Պոռշյանը գրել է. «Կարճահասակ, նրբակազմ բժշկապետը, երբ քանիցս հրաժարվեց այդ պատվից, առարկելով իր և իր ամուսնու հիվանդության մասին, ու հասարակության կողմից անլսելի մնաց, նա սեղանը քաշեց դահլիճի մեջտեղը, բարձրացավ վրան և բացէիրաց հրաժարվեց»¹։

Բժիշկ Ախվերդյանը, վերադառնալով Կովկաս, անզուսպ սիրով նվիրվում է հայ բանահյուսությանը, լեղինդները և հեքիաթները, գուսանների տաղերը հավաքելու, գրի առնելու, մշակելու շնորհակալ գործին։ Այդ տարիներին նրա

¹ Մեջրերումը կատարվում է ըստ Դ. Լեռնյանի հողվածի, «Անահիտ», 1929, 2, էջ 27։

տունը հայ դուսանների, երգասանների հավաքատեղի էր դարձել։ Այստեղ էին հավաքվում Թիֆլիս այցելող բոլոր երգասեր մարդիկ։

Ախվերդյանը հավաքում էր «ամենայն տեղերից հայերեն տպված ու ձեռագիր մատյաններ», փնտրում նրանց մեջ արժեքավորը, վերծանում անընթեռնելին, պրատումներ կատարում գրավաճառների մոտ, էջմիածնի ու Հաղարյանի ճեմարանների մատենադարաններում, անգամ Կովկասի փոխարքայի դիվանատանը, ինչպես նշում է Համբարձում էնֆիաճյանը, Ախվերդյանի ուշադրությունից շվրիպեց անգամ Լեհաստանի հայ դաղութում պահպանվող հայկական կուլտուրայի, պատմության հիշատակարանները՝ բանահյուսական և ազգագրական գրավոր և բանավոր աղբյուրներն ուսումնասիրելու համար։

«Տաճկահայ, պարսկահայ, հնդկահայ, ոռոսական տիրապետության գալառներից եկած հայեր, հարուստ, աղքատ, գետ, տգետ սկսեցին աղատ մուտք գործել նրա մոտ, իսկ ամենից գերակշիռ թիվ կազմողները լինում էին հայ աշուղները... գավառներից նմանապես անընդհատ ստանում էր Ախվերդյանը երգերի տետրակներ»¹։

«Մինչև օրս էլ չեմ տեսել մի ազգ, որն որ չունենա խաղ ու երգ. թե ուրախ և թե տիսուր վիճակում՝ ազգն կարոտ է խաղի, ու մեզ վրա չենք կարող ասել գերմանացվոց քերթողի խոսքն՝ շար մարդիկ երգ չունեն», — ահա թե որն էր Գ. Ախվերդյանի հոգսն ու մտատանջությունը, ահա թե ինչն էր դրդում նրան անշահախնդիր ու հայրենանվեր գործերի։

Լինելով բարձր կուլտուրայի տեր անձնավորություն, հիանալի տիրապետելով եվրոպական մի քանի լեզուների, ծանոթ լինելով համաշխարհային գրականության գանձերին, Ախվերդյանը ուխտել էր փրկել մոռացումից իր ժողովրդի սեփականությունը, մյուս ազգերին հանրահայտ դարձնել հայ տաղանդավոր գուսանների ստեղծագործությունները։ Դրա առաջին և կարևոր միջոցը նա տեսնում էր այդ գործերը հրատարակելու մեջ։ Եվ ահա, մի պայծառ առավոտ, Թիֆլիսի քահանաներից Մովսես Սայաթ-Նովան Գևորգ Ախվերդյանին նվիրում է իր պլապի՝ Սայաթ-Նովայի հայերեն և վրացերեն գրված երգերի դավթարը։

Ախվերդյանը գերվում է դավթարում գրված երգերով, իր նուրբ ճաշակով զգում, որ դրանք խոշոր և անզուգական ստեղծագործություններ են, և, մի կողմ թողնելով ամեն ինչ, ամբողջ եռանդով սկսում է զբաղվել Սայաթ-Նովայով։ Ախվերդյանը շտապում է իր հիացմունքը հայտնել Մովսես՝ իր ուսուցիչ Մկրտիչ Էմինին, խնդրելով օգնել Սայաթ-Նովայի երգերի հրատարակմանը։ Իր պատասխան նամակում Մ. Էմինը հավանություն է տալիս Ախվերդյանի նախաձեռնությանը, գրելով «Ինձ համար ցանկալի է օր առաջ ծանոթացնել գիտական աշխարհին այդ գանձի հետ...»²։

Գ. Ախվերդյանը մանրազնին ուսումնասիրում է Սայաթ-Նովայի «Դավթարը», վերծանում, ճշտում է դժվար ընթեռնելի քառատողերը, բացատրում է Թիֆլիսայի բարբառի դարձվածքները, ծանոթագրում երգերը, կազմում անհասկանալի բառերի բառարան։

Տեքստուգիական դժվարին աշխատանք էր պահանջվում՝ այդ ամենը կատարելու համար, քրտնաշան և համառ գործ, որը, սակայն, պատվով կատարեց Ախվերդյանը, Բացի այդ, Ախվերդյանը գրում է «Թիֆլիսի բարբառի

1. «Կոռնկ հայոց աշխարհի», 1861, էջ 883։

2. Նամակը մեջ է բերվում «Հումա» հանդեսից, 1896, Ա.

մի քանի հատկությունների վրա» մեծարժեք ուսումնասիրությունը, որը՝ փաստորեն, սայաթնովագիտության սկիզբը հանդիսացավ:

Քանի որ Սայաթ-Նովայի մահից արդեն անցել էր 60 տարի, Ախվերդյանը ստիպված էր տքնածան աշխատանք կատարել՝ մարդկանց հիշողությունների և լեզենդների հիման վրա պարզել նրա կենսագրության հետ կապված շատ առեղծվածային հարցեր, մասնավորապես, հետաքրքրություն է ներկայացնում Սայաթ-Նովայի հերոսական մահը վկայող՝ Ախվերդյանի ուսումնասիրության այն հատվածը, որտեղ նա գրում է. «Հաղպատու առաջնորդարանի հենց բերդի տակն ըլելով՝ թշնամիքը ներս են ընկնում եկեղեցու գավիթն ու սկսում են կոտորելն ու կողոպտելն: Սայաթ-Նովու վրա են հասնում եկեղեցումն աղոթք անելիս: Մրանից պահանջում են դուրս գալն ու հավատն ուրանալը, բայց նա պարսից թրերու տակն ավանդում է հոգին, ասելով. «Զիմանամ քիլիսաղան, դոնմանամ իսաղան»: Մի քանի օրից՝ պարսից թիֆլիսեն դուրս գալուց հետո, վեր են առնում նրա մարմինն ու թաղում մեծ բերդի եկեղեցու հյուսիսային փոքր դռան առջևն»¹:

Գ. Ախվերդյանը 1852 թվականին Սայաթ-Նովայի երգերի գիրքը լույս է ընծայում Մոսկվայում, 1200 օրինակ տպաքանակով, Գոտիեի տպարանում («Սայաթ-Նովա, լույս դցած աշխատությունով Գեորգեայ Ախվերդեան»):

Ինչպես և պետք էր սպասել, Սայաթ-Նովայի գիրքն իր վրա է բնեուում ինչպես հայ, այնպես էլ օտարազգի շատ ականավոր գիտնականների ուշադրությունը: Շնորհիվ Ախվերդյանի, Սայաթ-Նովան իր վերածնունդն է ապրում այս անգամ այլևս երբեք շմոռացվելու հաստատ երաշխիքով:

Ֆրանսիացի հայտնի գիտնական, ականավոր հայագետ Դյուլորիեն շտապում է իր հիացմունքը հայտնել Սայաթ-Նովայի գրքի մասին՝ «...իմ միակ նպատակն է մերոնց մեջ տարածել ձեր գեղեցիկ գրականությունը և ցույց տալ, որ այն արժանի է գիտական աշխարհի կողմից ավելի մեծ ուշադրության...»:

Պրոֆ. Լ. Մսերյանն իր «Հայերեն բարբառախոսութիւն» աշխատության մեջ գրում է. «Հրատարակութիւն մը զոր բժշկութեան դոկտոր Գէորգ Ախվերդեանցին պարտական ենք... Աշուղ Սայաթ-Նովայի երգոց հրատարակութիւնը կրնար պատիւ ընել որեւէ բանասեր-ազգագրագետի»:

Ախվերդյանի հայրենանվեր դործը արժանացավ նշանավոր շատ մարդկանց ուշադրության:

Այն աննկատ շմնաց ականավոր ուսուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ուշադրությունից, այդ մասին դրվատանքի ջերմ խոսքեր գրվեցին Վենետիկում, Լոնդոնում, Փարիզում, Պոլսում և այլուր: Հետագայում, երբ Սայաթ-Նովան արժանացավ համամարդկային ուշադրության, երբ նրա կյանքի ու գործի մանրամասնություններով զբաղվեցին հայ և այլ ազգի շատ ականավոր մարդիկ, նրանցից և ոչ մեկը «յոլա չգնաց» առանց Գ. Ախվերդյանի հեղինակությանը դիմելու, առանց նրա հիշատակին ջերմ, հիացմունքի խոսքեր ասելու:

Թիֆլիսում ապրող ուսու բանաստեղծ Յակով Պոլոնսկին 1851 թվականին Ախվերդյանի մոտ ծանոթանում է Սայաթ-Նովայի երգերին, խանդավառում նրանցով և բժշկապետի օգնությամբ՝ ուսումնասիրում կովկասյան

¹ Գ. Ախվերդյան, «Գուսանք», 1852, Մոսկվա, 1, 2 ժԲ:

ժողովուրդների բանահյուսությունը։ Նա շատ բարձր է գնահատում Սայաթնովայի ստեղծագործությունները, նշելով թեմատիկայի բազմազանությունը և ինքնատիպ պոեզիան։

«Զենք մեղանչիլ, եթե պնդենք Ախվերդյանի մասին, որ 60-ական թվականներին Ռուսաստանից ողողվող գրական ուղղությունը հայի մեջ մակարդացավ Ախվերդյանի մառանում», — գրել է Ղազարոս Աղայանը։

Հովհաննես Թումանյանը նույնպես բարձր է գնահատել բժիշկ Գևորգ Ախվերդյանի կատարած գործը։ 1913 թվականի մարտի 14-ին Թիֆլիսում տեղի ունեցած գրական երեկոյում նա ասել է. «...Եթե Սայաթ-Նովայի երգերը փրկված և գրականության սեփականություն են դարձած, միայն հանգուցյալ Գևորգ Ախվերդյանի ջանքերով, մի իսկապես ելքոպական մտքով լուսավորված մարդ, որը ամենայն խնամքով հավաքել և հրատարակել է այդ երգերը»¹։ Թումանյանի առաջարկությամբ ժողովականները ուտքի են կանգնում և հարգում Ախվերդյանի հիշատակը։

Գ. Ախվերդյանը, սայաթնովագիտությունից բացի, ինչպես ասվեց, հրակայական գործ է կատարել նաև հայ մյուս ականավոր երգիչների ստեղծագործությունները հավաքելու գործում։ Նրա մյուս ստվար աշխատանքը՝ «Հայաշուղներ»։ Լուս գցած աշխատասիրութէնով Գեորգեայ Ախվերդեան» հրատարակվեց նրա մահից 42 տարի հետո, Թիֆլիսում, իր դստեր՝ Մանէ Ախվերդյանի կողմից։ Գիրքն ունի հետևյալ ընծայականը՝ «Իր բազմերախտ հոր Գէորգ Ախվերդյանի հիշատակին ծնողասիրության անկեղծ հաւաստեօք նուեսիւր երախտազգաց դուստր օրիորդ Մանէ Ախվերդեանից»։

527 Էջից բաղկացած այս ծավալուն ժողովածուում տեղ են գտել Գ. Ախվերդյանի հավաքած՝ Շիրինի, Գյորգի-Նավեի, Միսկին-Բուրջիի, Ռոստմ Մատաթովի և շատ ուրիշ հայ նշանավոր աշուղների տաղերը։

Բախտը շժպտաց, սակայն, Գևորգ Ախվերդյանին։ Երկար տարիներ նա ծանր հիվանդ էր և անկողնուն գամված։ Ախվերդյանը կարճ ժամանակում մեկը մյուսի ետևից կորցրեց իր շորս տղաներին, կնոջը։ «Քանի-քանի անգամ աշխարհը փորձեց և խմեցուց նրան իր դառնության բաժակից... սակայն նա միշտ անխոռվ և քրիստոնեական արիությամբ ախոյան հանդիսացավ և մեղանից ոչ ոք նրա վրա հուսահատության նշմարունք անգամ շտեսավ», — ասված է նրա մասին «Կոռունկ հայոց աշխարհին» հանդեսի 1861 թ. 883 էջում տպագրված մահախոսականում։

Ախվերդյանն անկողին ընկած, ծանր հիվանդ էր, սակայն նրա տանը դարձյալ հավաքվում էին ժամանակի ականավոր մտավորականները, հայ մշակույթի հարցեր քննարկում, բարի ծրագրեր կազմում։

Գ. Ախվերդյանը մահացավ 1861 թվականի նոյեմբերի 17-ին, 43 տարեկան հասակում և հողին հանձնվեց Թիֆլիսում։

Նրա հիշատակին նվիրված բանաստեղծության մեջ լավ է գրել անցած դարի 60-ական թվականների բանասեր Գևորգ Տեր-Ալեքսանդրյանը։

Գիշեր-ցերեկ ամեն սահաթ
Փիքը էր քաշում խալխի համար,
Թե խոսքով ու թե գրելով

1 «Թումանյանը քննադատ», 1939, Երևան, էջ 243։

Ամեն թահար, ամեն ճամփուլ...
 Ախ, ափսոս, որ կինքդ կարճ էր
 Մեր Հախվիրդենց Գէուրք աղբեր...¹

Իսկապես, Գևորգ Ախվերդյանը՝ բժշկի, բանասիրի և հասարակական գործչի՝ կյանքի իր ճանապարհն անցավ ժողովրդի համար «փիքր քաշելով», հանճարեղ Սայաթ-Նովայի հետ իր զործն ու անունը թողնելով ապագա սերունդներին:

Ծ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

¹ «Անահիտ», 1929, № 2: